

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

մենք կը գտնուինք լուսնէն ձգուած ստուերի կոնին եզերքը: Դեռ ուրիշ վայրիկան մ'ալ:

Կ'ուզէի Արևուն վերջին ճառագայթին մարիլը տեսնել, բայց պէտք էր գոցել աչքերս աւելի յարմար ըլլալու համար ամփոփելու ամենափոքր պսակին երանգ-ները: Կը համակամիմ եւ կը սպասեմ, ինչպիսի անձկութեամբ:

Վերջին վայրկեանը երկար է: Եթէ զիս մոռնային: Բայց ոչ: Ահա սպասեալ հնչ. կը բանամ աչքերս բոլորական խաւարումը սկսած է: Մոգական տեսարան:

Արեւը՝ կլոր բիծ մը մէջանի սեւութեամբ մը: Իր սև սկաւառակին շուրջը զոլորշային լոյս մը, թեթև. հակառակ ասոր ոսկիէ եւ արծաթէ փուլով զարդարուած:

Կարծես, թափանցիկ զրեթէ անիրական թեւերով հիւսեալ պսակն:

Չախակողմը, լայն խուրձ մը կը տալածուի հասարակածէն: Աջակողմը տալածութիւնը կրկին է: Կէտերէն մին ուղղուած է դէպի փայլածու, որ կը փայլի հիանալի փայլով: Ճիշդ ընդհանուր ձևն էր զոր կը սպասէի:

Այս հայեցումները կը տեսնէ հազիւ մի քանի երկվայրկեան. վայրկեան մ'իսկ չունիմ այն ստիկումի գագաթումը՝ զոր կը կրեն ոմանք, նոյն իսկ երբեմն աստեղա-վառներ: Բայց արեւային պսակին այսպէս կնճռոտ տեսարանին դիմաց, տեսակ մը տագնապ ունեցայ, մտածելով որ երբեք վայրկեան մը պիտի չբաւէ ինծի հրաշալիքը գծելու:

Բոլոր արեւնա զլուխս կը զարնէ բուռն կերպով, սիրտս աւելի արագ կը բարախէ եւ ջրային ցնցում մը զիս վերի վայր կընէ...

Իսկոյն սև սկաւառակի ծակէ մը՝ թափանցելով ճերմակ եւ լուսաւոր ճառագայթ մը անգթօրէն խորտակեց հմայքը:

Պսակը կ'անհետանայ: Ամէնքնիս պէտք է առկաթ թողո՞ւնք դիտողութիւնները, որոնց այլեւ պէտք չունինք: Համակալմութեամբ ակնարկ մը կը ձգեմ գծագրութեան վրայ, ուր ցրուած եւ շատ կարճ երազէն՝ ձևը միայն կը մնայ ։

(Շարունակելի)

Հ. ԽՈՐԵՆ ՍՈՒՆԱՆ

Այս վերնագրին տակ պիտի ամփոփենք այնպիսի մանրամասն, որոնք անխտիր մաքն անծի ալ օգտակար կրնան ըլլալ:

Ա.

1. — ԳՈՁԻՏԱՐԸ՝ (որ բաւական տհաճ տուկ մ'է եւ ոչ նուազ նեղութիւն ենթակային) կարելի է խափանել՝ շնչատութիւնը երկարածգելով՝ որչափ կրնանք, բայց եւ այնպէս ատիկա չի աշոյղի ամէն անգամ: Ուրիշ միջոց մ'ալ՝ կտղուց մը արացուած ճերմակ պղպեղ քիթը քաշելն է, որով մարդը կը փոքտայ, ու հետեւ պէտ՝ գոճգտալը կ'անցնի:

2. — Եթէ՝ ՋՂԱՅՈՏ ՄԵՆՆ ԸԼԱՍԻՎ՝ ԳՈՐԻ ՁՈՒՆՈՒՍ, զուրս ցատէ՛ք անկողնէ՛ք՝ պաղ ջուրով լուս սրունքներդ միշտ ծունկ եւ դարձեալ անկողին մտի, թաց ուտերով:

3. — ԺԱՆԳՈՏԱՆ ՊՈՂԱՍԸ ՄԱՐԵՐԻՆՈՒ ՆՈՒՄԱՐ՝ առ կտոր մը կաշի եւ քո՛ւ անոր վրան լաւ սոսինձ, ու դեռ չչորցած՝ լեցուր: Վրան սնկաքարի բարակ փոշի: Յաշորդ օրը կրկնէ՛ միևնոյն գործողութիւնը: Այդ կերպով պատրաստուած ու կատարելապէս լոցած կաշիով մը երբ չդիտ ժանգոտած պողպատը՝ դարձեալ կը փայլի:

4. — ԿՈՇԿԱՆԵՐՈՒ ՄԵՆ ՁՈՐԻ ԶԹԱՅԱՆՑԵԼՈՒ ՆԱՄԱՐ՝ պէտք է երեք անգամ, եւ կամ աւելի լաւ երեք օր զատ զատ, վրձինով մը քսել կաշիին վրայ՝ հետեւալ խառնուրդը.

- | | |
|----|----------------------|
| 6 | գրամ մեղրամոմ, |
| 3 | » Բուրգոյնի ձիթ, |
| 95 | » կտաւի ձէթ, |
| 6 | » ռետինի իսկուրթիւն, |

Պէտք է առաջին երեքը մեղմ կրակով հալել. իսկ ռետինը՝ յետոյ միացնել, կրակէն բոլորովին հեռու, մինչդեռ զանգուածը չէ պաղած:

5. — ՃԱՆՈՒՅ ԲՅՈՒՆԵՐԸ (որ ամենաշատակար են հաւերու առողջութեանը, եւ խափանարար պատճառ հակիթի առատութեան), դիրաւ կը ջնջուին, եթէ երբեմն-երբեմն հաւուցի դոներն ու պատուհանները ամրափակ կերպով զոցես՝ ու հրայիկ երկարի մը վրայ՝ երկաթէ անօթի մը մէջ ծծումբի փոշի լեցնելով ծխես: — մէկ մեթր խորանարդ օդի համար 60 գրամ ծծումբը հեռիք է: Քանի մը ժամ յետոյ՝ պէտք է լաւ մը օդափոխել՝ հողմահարելով, եւ ապա թողուլ որ ներս մտնեն հաւերը: Երկուերեք օր վերջը, սակայն, հարկ է դարձեալ ծծումբ ծխել, որպէս զի սպանուին նաեւ նոր ծնած անիծները:

Հ. Գ. Ա.